Շուշաններ

Շուշանիկը սիրում է շուշաններ աճեցնել։ Նա գնել է շուշանների ինչ-որ քանակությամբ սոխուկներ։ Սոխուկներից տարբեր գույնի շուշաններ են աճելու։ Շուշանիկը գիտի, թե որ գույնի շուշանի քանի սոխուկ ունի, բայց սոխուկներն իրար նման են, և արտաքինից անհնարին է պարզել, թե որ մեկից ինչ գույնի շուշան է դուրս գալու։

Շուշանիկը խոստացել է ընկերուհուն, որ նրան ինչ-որ քանակությամբ սոխուկներ է նվիրելու, որպեսզի նա ևս շուշաններ տնկի։ Շուշանիկը ուզում է իրեն պահել այնքան սոխուկներ, որպեսզի համոզված լինի, որ տնկելուց հետո ինքը յուրաքանչյուր գույնից առնվազն մեկ շուշան կունենա, մյուս կողմից, նա ցանկանում է ընկերուհուն, որքան հնարավոր է, շատ սոխուկներ նվիրել։

Օգնեք Շուշանիկին պարզելու, թե քանի սոխուկ նա պետք է իրեն պահի։

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է Շուշանիկի գնած սոխուկների տեսակների n ($1 \le n \le 100$) քանակը։ Երկրորդ տողում տրված են, 100-ին չգերազանցող, n հատ բնական թվեր, որոնք ցույց են տալիս, թե Շուշանիկը յուրաքանչյուր տեսակից քանի սոխուկ է գնել։

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ սոխուկների մինիմալ քանակը, որ Շուշանիկը պետք է տնկի, որպեսզի յուրաքանչյուր գույնի շուշանիկից առնվազն մեկ հատ ունենա։

Օրինակներ

Մուտք	Ելք
3 5 6 7	14
1 10	1